

«Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի՝ հնագիտական գտածոների վերականգնման և պահպանման համար սարքավորումների բարելավման ծրագրի» ավարտական արարողությունը

Հունիսի 22-ին տեղի է ունեցել «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի՝ հնագիտական գտածոների վերականգնման և պահպանման համար սարքավորումների բարելավման ծրագրի» ավարտական արարողությունը Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) աջակցությամբ: Արարողությանը ներկա էին ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան պրն. Ֆուկուշիմա Մասանորին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ պրն. Արա Խզմայանը, JICA-ի Վրաստանի գրասենյակի մշտական ներկայացուցիչ պրն. Էջիրի Յուկիհիկոն, Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի տնօրեն Խաչիկ Հարությունյանը և կազմակերպությունների այլ ներկայացուցիչներ:

Ծրագրի մասին դրամաշնորհային համաձայնագիրը JICA-ի և ՀՀ կառավարության միջև ստորագրվել է 2018 թվականի փետրվարի 16-ին: Ծրագրի շրջանակներում գիտահետազոտական կենտրոնին պետք է տրամադրվեին սարքավորումներ՝ բարելավելու արժեքավոր հնագիտական նմուշների վերականգնման ու պահպանման գործընթացը: Արդյունքում լաբորատորիան վերագինվել է վերջին սերնդի գերժամանակակից սարքավորումներով, որոնք եզակի են ՀՀ-ում հնագիտական գտածոների վերականգնման ոլորտում:

Արարողության ժամանակ ջերմորեն ողջունելով ներկաներին՝ պրն. Արա Խզմայանը իր երախտագիտությունը հայտնեց JICA-ին և ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանությանը Հայաստանում ծրագրի իրականացման համար: Պրն. Արա Խզմայանի խոսքով՝ միայն հնագույն պատմությունն ունեցող ժողովուրդը կարող է այդպես գնահատել մեկ այլ հնագույն ժողովրդի պատմամշակութային ժառանգությունը:

Դեսպան Ֆուկուշիման իր հերթին շնորհավորեց բոլոր մասնակիցներին ծրագրի հաջող ավարտի կապակցությամբ և անկեղծ հույս հայտնեց, որ այս նախագիծը էլ ավելի կխթանի բարի կամքն և բարեկամական հարաբերությունները, որոնք արդեն առկա են Ճապոնիայի և Հայաստանի միջև:

Հետազոտական կենտրոնի տնօրեն պրն. Խաչիկ Հարությունյանը խորին

շնորհակալություն հայտնեց ծրագրի կազմակերպիչներին: Նա շեշտեց, որ ժամանակակից սարքավորումներով հագեցած այս լաբորատորիան թույլ կտա ավելի արդյունավետ և ճշգրիտ կազմակերպել վերականգնման և հետազոտության գործընթացը, ինչպես նաև կօգնի նախագծերի մշակմանը և պատմամշակութային ժառանգության ոլորտում ներգրավված մասնագետների որակավորման բարձրացմանը:


Պրն. Էջիրի Յուկիհիկոն նշեց, որ Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի կողմից ներկայացված հայտը ճապոնական կողմից հիմնավորված և առաջնահերթ գնահատելու հիմնական պատճառն այն է, որ այն ծառայելու է հասարակության լայն շերտերին, քանի որ վերականգնված իրերը հետագայում ցուցադրվելու են Չայաստանի տարբեր թանգարաններում, և հանրությունը դրանցով է ճանաչելու սեփական մշակույթը:



Դեսպան Ֆուկուշիման շնորհավորում է Արա Խզմայանին



Նոր սարքավորված լաբորատորիան



Սարքավորումների ցուցադրում



Դեսպան Ֆուկուշիման և Էջիրի Յուկիհիկոն